ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

27 ՄԱՅԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ալեքսեյ Չիչյովը

Նիստը արձանագրում էր՝ ը

ԼՍԵՑԻՆ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 Թ._Ի ՄԱՅԻՍԻ 27_Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՍՄԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Ֆիոլետովո համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու 2025թ-ի մարտի 20-ի թիվ 03 հերթական նիստի օրակարգը.

Օրակարգ.

1. Ֆիոլետովո համայնքի 2025 թվականի մայիսի 27-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 34-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

3. Ֆիոլետովո համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի «ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ.-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՍՄԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է

Կատարել փոփոխություն Ֆիոլետովո համայնքի 2024թ.-ի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2025 թ.-ի բյուջեն հաստատելու մասին» թիվ 34-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՍՄԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է

1.Ֆիոլետովո համայնքում սկսել 2025թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2.Ֆիոլետովո համայնքում սկսել 2025թ-ին բյուջեում հատկացնել 1.000.000 ՀՀ դրամ գումար՝ 2025թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 500000 ՀՀ դրամ:

4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

6. Համայնքի ղեկավարին՝ 1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն:

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու հերթական նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի հուլսի 20-ը, ժամը 11:00-ը:

2. Նիստը կազմակերպել ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ղեկավարի աշխատասենյակում, հասցեն՝ Ֆիոլետովո համայնք, 1-ին փողոց, 146 շենք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19-Ա)*

Ավագանու անդամներ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԼՈԽԻՆՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ

ՄԻԽԱԻԼ ՉԻՉՅՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

ՄԻԽԱԻԼ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

Համայնքի ղեկավար

ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ_____

Նիստն արձանագրեց՝ ը _____